**Արձանագրություն N 2**

<<ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/8>> ծածկագրով կայանի կարիքների համար **<<Համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի>>** գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մեծամոր 18 հունվարի 2016թ.

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ Ա. Մելքոնյանը,
Հանձնաժողովի անդամներ Վ. Արշակյանը, Ա. Կարապետյանը, Գ. Մարգարյանը,
Հանձնաժողովի քարտուղար Ա. Ղազարյանը,

1. **<<ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/8>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց <<ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/8>> ծածկագրով <<Համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի>> գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 706 500 (յոթ հարյուր վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը:

ա. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի հայտ է ներկայացրել .

1.1 <<ՍԵԳ>> ՍՊԸ, ք. Երևան, Սարկավարգի 72/2 բն. 18, հեռ. 077-66-07-86, 055-01-90-60 ընդհանուր արժեքով 554 000 (հինգ հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ, մասնակիցը ԱԱՀ վճարող չէ:

2. Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած ծրարը և փաթեթում գտնվող փաստաթղթերը (կցվում են), հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

<<ՍԵԳ>> ՍՊԸ-ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. **Ներկայացվեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը, առանց ԱԱՀ-ի՝**

| Չ/Դ | Ապրանքի անվանումը | <<ՍԵԳ>> ՍՊԸ |
|---|---|---|
| 1 | Նոթբուք | 496 000 (չորս հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ |
| 3 | Մոնիտոր | 58 000 (հիսունութ հազար) ՀՀ դրամ |

ՈՒսումնասիրելով մասնակցի գնային առաջարկը, հանջնաժողովը որոշեց՝

թիվ 1 և թիվ 3 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՍԵԳ>> ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին էլեկտրոնային եղանակով ծանուցել.

առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

5. Հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու օրինակները և ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15-00-ը, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________ Ա. Մելքոնյան

Անդամներ՝ ______________ Վ. Արշակյան

______________ Ա. Կարապետյան

______________ Գ. Մարգարյան

Քարտուղար՝ ______________ Ա. Ղազարյան